

# ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

## GANTEGH

BULLETIN DU DIMANCHE  
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE  
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



## GANTEGH

SUNDAY BULLETIN OF  
ST. GREGORY THE ILLUMINATOR  
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

[WWW.SAINTGREGORY.CA](http://WWW.SAINTGREGORY.CA)

**ԿԻՐԱԿԻ, 8 ՅՈՒԼԻՍ 2018**

**ՊԱՅՃԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ  
ՏԵԱՌՆ ՄԵՌՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ  
ՎԱՐԴԱՎԱՌ / ԹԻԻ 66**

**SUNDAY, July 8, 2018**

**FEAST OF TRANSFIGURATION OF OUR  
LORD JESUS CHRIST**

**VARTAVAR / NO. 66**



### Today's Bible Readings:

1 John 1.1-7 / Matthew 16.13-17.13 |

*Պատարագիչ՝*

**ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔՅՆՅ. ՍԱՐԳԱՐԵԱՆ**

**Celebrant:**

**REV. FR. DAVID MARGARYAN**

**Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan,  
Dn. Vahan Shakaryan,**

**Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan**

**Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian**

**Choirmaster: Mr. Sarkis Barsemian**


**Organist: Mr. Karen Manucharyan**

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ՅՈՎՅԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՅԱՆՐԱԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԵՆ 1.1-7

**1**Կեանքի Խօսքին մասին - որ սկիզբէն էր, որ մենք լսեցինք, որ մեր աչքերով տեսանք, որ դիտեցինք ու մեր ձեռքերը շօշափեցին. **2**(արդարեւ կեանքը յայտնուեցաւ, մենք տեսանք զայն, եւ կը վկայենք ու կը պատմենք ձեզի այդ յաւիտենական կեանքին մասին, որ Յօրը քով էր եւ յայտնուեցաւ մեզի.) - **3**ինչ որ տեսանք ու լսեցինք՝ կը պատմենք ձեզի, որպէսզի դո՛ւք ալ հաղորդութիւն ունենաք մեզի հետ: Մեր հաղորդութիւնը Յօրը հետ է, եւ իր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի հետ: **4**Կը գրենք ձեզի այս բաները, որպէսզի ձեր ուրախութիւնը լման ըլլայ:

**5**Եւ սա՛ է այն պատգամը՝ որ լսեցինք իրմէ ու կը հաղորդենք ձեզի, թէ Աստուած լոյս է, եւ անոր մէջ բնաւ խաւար չկայ: **6**Եթէ ըսենք. «Մենք հաղորդութիւն ունինք անոր հետ», սակայն խաւարի մէջ ընթանանք, կը ստենք ու չենք կիրարկեր ճշմարտութիւնը: **7**Իսկ եթէ լոյսի մէջ ընթանանք, ինչպէս ան լոյսի մէջ է, հաղորդութիւն կ'ունենանք իրարու հետ, եւ անոր Որդիին՝ Յիսուս Քրիստոսի արիւնը կը մաքրէ մեզ ամէն մեղքէ:

## ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 16.13-17.13

**13**Երբ Յիսուս կ'երթար Փիլիպպոսի Կեսարիային երկրամասը՝ հարցուց իր աշակերտներուն. «Մարդիկ ի՞նչ կ'ըսեն, ո՞վ եմ ես՝ մարդու Որդին»: **14**Անոնք ըսին. «Ոմանք կ'ըսեն թէ Յովհաննէս Սկրտիչն ես, ուրիշներ՝ Եղիան, ուրիշներ ալ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը»: **15**Ըսաւ անոնց. «Իսկ դո՛ւք ի՞նչ կ'ըսեք, ո՞վ եմ»: **16**Սիմոն Պետրոս պատասխանեց. «Դուն Քրիստո՛սն ես, ապրող Աստուծոյ Որդին»: **17**Յիսուս ըսաւ անոր. «Երանի՛ քեզի, Սիմո՛ն, Յովնանի՛ որդի. որովհետեւ ո՛չ թէ մարմինն ու արիւնը յայտնեցին քեզի ասիկա, հապա իմ Հայրս՝ որ երկինքն է: **18**Ես ալ կը յայտարարեմ քեզի. “Դուն Պետրոս ես, եւ այս վեմին վրայ պիտի կառուցանեմ իմ եկեղեցիս, ու դժոխքին դռները պիտի չյաղթեն անոր: **19**Երկինքի թագաւորութեան բանալիները

պիտի տամ քեզի, եւ ի՛նչ որ երկրի վրայ կապես՝ երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ, ու ի՛նչ որ երկրի վրայ արձակես՝ երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ”»: **20**Այն ատեն աշակերտներուն պատուիրեց՝ որ ո՛չ մէկուն ըսեն թէ ինք Քրիստոսն է:

**21**Այդ ատենէն ետք Յիսուս ցոյց տուաւ իր աշակերտներուն թէ պետք էր որ երթար Երուսաղէմ, շատ չարչարանքներ կրէր երեցներէն, քահանայապետներէն եւ դպիրներէն, սպաննուէր ու յարուբիւն առնէր երրորդ օրը: **22**Պետրոս մէկդի առաւ զինք, եւ սկսաւ յանդիմանել զինք՝ ըսելով. «Ամե՛նեւհին, Տէ՛ր. այդ բանը չպատահի՛ քեզի»: **23**Ինք ալ դառնալով՝ Պետրոսի ըսաւ. «Ետե՛ւս գնա, Սատանա՛յ, դուն գայթակղութիւն ես ինծի. որովհետեւ ո՛չ թէ Աստուծոյ բաները կը մտածես, հապա՛ մարդոց բաները»:

**24**Այն ատեն Յիսուս ըսաւ իր աշակերտներուն. «Եթէ մէկը ուզէ գալ իմ ետեւէս, թող ուրանայ ինքզինք, վերցնէ իր խաչը, ու հետեւի ինծի: **25**Որովհետեւ ո՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինծի համար, պիտի գտնէ զայն: **26**Քանի որ մարդ ի՛նչ օգուտ կ’ունենայ, եթէ շահի ամբողջ աշխարհը բայց կորսնցնէ իր անձը. կամ՝ մարդ ի՛նչ փրկանք պիտի տայ իր անձին փոխարէն: **27**Որովհետեւ մարդու Որդին պիտի գայ իր Յօր փառքով՝ իր հրեշտակներուն հետ, եւ այն ատեն պիտի հատուցանէ իւրաքանչիւրին՝ իր գործերուն համեմատ:

**28**Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Յոս ներկայ եղողներէն կան ոմանք՝ որ մահ պիտի չհամտեսեն, մինչեւ որ տեսնեն մարդու Որդին՝ եկած իր թագաւորութեամբ”»:

**17.1**Վեց օր ետք՝ Յիսուս առաւ իրեն հետ Պետրոսը, Յակոբոսն ու անոր եղբայրը՝ Յովհաննէսը, հանեց զանոնք բարձր լեռ մը՝ առանձին, **2**եւ այլակերպեցաւ անոնց առջեւ. իր երեսը փայլեցաւ արեւի պէս, ու իր հանդերձները ճերմակ եղան՝ լոյսի պէս: **3**Եւ ահա՛ Մովսէս ու Եղիա երեւցան անոնց, եւ կը խօսակցէին իրեն հետ: **4**Պետրոս ըսաւ Յիսուսի. «Տէ՛ր, լաւ է որ կենանք հոս. եթէ կ’ուզես, շինենք հոս երեք վրան, մէկը՝ քեզի, մէկը՝ Մովսէսի, ու մէկը՝ Եղիայի»: **5**Մինչ ան կը խօսէր, լուսաւոր ամպ մը հովանի եղաւ անոնց վրայ, եւ ձայն մը եկաւ ամպէն՝ ըսելով. «Ա՛յս է իմ սիրելի Որդիս՝ որուն հաճեցայ. անո՛ր մտիկ ըրէք»: **6**Երբ աշակերտները լսեցին, իրենց երեսին վրայ ինկան ու սաստիկ վախցան: **7**Յիսուս մօտենալով՝ դպաւ անոնց եւ ըսաւ. «Ոտքի՛ ելէք, մի՛ վախնաք»: **8**Իրենց աչքերը բարձրացուցին ու ո՛չ մէկը տեսան՝ բայց միայն Յիսուսը:

**9**Երբ լեռնէն վար կ’իջնէին, Յիսուս հրահանգեց անոնց. «Այդ տեսիլքը ո՛չ մէկուն պատմեցէք, մինչեւ որ մարդու Որդին մեռելներէն յարուբիւն առնէ»:

**10**Աշակերտները հարցուցին իրեն. «Հապա ինչո՞ւ դպիրները կ’ըսեն թէ “պետք է որ նախ Եղիա գայ”»: **11**Յիսուս պատասխանեց անոնց. «Իրաւ է թէ նախ Եղիա պիտի գայ եւ վերահաստատէ ամէն բան: **12**Բայց ձեզի կ’ըսեմ թէ Եղիա արդէն եկած է, ու չճանչցան զայն, հապա ինչ որ ուզեցին՝ ըրին անոր. նոյնպէս

ալ մարդու Որդին պիտի չարչարուի անոնցմէ»: **13**Այն ատեն աշակերտները հասկցան թէ Յովհաննէս Մկրտիչին մասին ըսաւ իրենց:

## 1 John 1.1-7

**1** That which was from the beginning, which we have heard, which we have seen with our eyes, which we have looked upon, and our hands have handled, of the Word of life; **2** (For the life was manifested, and we have seen it, and bear witness, and shew unto you that eternal life, which was with the Father, and was manifested unto us;) **3** That which we have seen and heard declare we unto you, that ye also may have fellowship with us: and truly our fellowship is with the Father, and with his Son Jesus Christ. **4** And these things write we unto you, that your joy may be full.

**5** This then is the message which we have heard of him, and declare unto you, that God is light, and in him is no darkness at all. **6** If we say that we have fellowship with him, and walk in darkness, we lie, and do not the truth: **7** But if we walk in the light, as he is in the light, we have fellowship one with another, and the blood of Jesus Christ his Son cleanseth us from all sin.

## MATTHEW 16.13-17.13

**13**When Jesus came to the region of Caesarea Philippi, he asked his disciples, “Who do people say the Son of Man is?” **14**They replied, “Some say John the Baptist; others say Elijah; and still others, Jeremiah or one of the prophets.” **15**“But what about you?” he asked. “Who do you say I am?” **16**Simon Peter answered, “You are the Messiah, the Son of the living God.”

**17**Jesus replied, “Blessed are you, Simon son of Jonah, for this was not revealed to you by flesh and blood, but by my Father in heaven. **18**And I tell you that you are Peter,<sup>b</sup> and on this rock I will build my church, and the gates of Hades<sup>c</sup> will not overcome it. **19**I will give you the keys of the kingdom of heaven; whatever you

bind on earth will be<sup>d</sup> bound in heaven, and whatever you loose on earth will be<sup>e</sup> loosed in heaven.” 20 Then he ordered his disciples not to tell anyone that he was the Messiah.

21 From that time on Jesus began to explain to his disciples that he must go to Jerusalem and suffer many things at the hands of the elders, the chief priests and the teachers of the law, and that he must be killed and on the third day be raised to life.

22 Peter took him aside and began to rebuke him. “Never, Lord!” he said. “This shall never happen to you!”


23 Jesus turned and said to Peter, “Get behind me, Satan! You are a stumbling block to me; you do not have in mind the concerns of God, but merely human concerns.”

24 Then Jesus said to his disciples, “Whoever wants to be my disciple must deny themselves and take up their cross and follow me. 25 For whoever wants to save their life<sup>f</sup> will lose it, but whoever loses their life for me will find it. 26 What good will it be for someone to gain the whole world, yet forfeit their soul? Or what can anyone give in exchange for their soul? 27 For the Son of Man is going to come in his Father’s glory with his angels, and then he will reward each person according to what they have done.

28 “Truly I tell you, some who are standing here will not taste death before they see the Son of Man coming in his kingdom.”

17.1 And after six days Jesus took with him Peter and James, and John his brother, and led them up a high mountain by themselves. 2 And he was transfigured before them, and his face shone like the sun, and his clothes became white as light. 3 And behold, there appeared to them Moses and

Elijah, talking with him. 4 And Peter said to Jesus, “Lord, it is good that we are here. If you wish, I will make three tents here, one for you and one for Moses and one for Elijah.” 5 He was still speaking when, behold, a bright cloud overshadowed them, and a voice from the cloud said, “This is my beloved Son,<sup>g</sup> with whom I am



Matthew 17:2 There he was transfigured before them. His face shone like the sun, and his clothes became as white as the light.

well pleased; listen to him.” 6When the disciples heard this, they fell on their faces and were terrified. 7But Jesus came and touched them, saying, “Rise, and have no fear.” 8And when they lifted up their eyes, they saw no one but Jesus only. 9And as they were coming down the mountain, Jesus commanded them, “Tell no one the vision, until the Son of Man is raised from the dead.” 10And the disciples asked him, “Then why do the scribes say that first Elijah must come?” 11He answered, “Elijah does come, and he will restore all things. 12But I tell you that Elijah has already come, and they did not recognize him, but did to him whatever they pleased. So also the Son of Man will certainly suffer at their hands.” 13Then the disciples understood that he was speaking to them of John the Baptist.

# ՏՈՆԵՐ

Շաբաթ, 07 Յուլիս 2018

## Յիշատակ Հին Տապանակի Եւ Նոր Ա. Եկեղեցւոյ Տօն

Ուխտի տապանակը Հին Կտակարանի ամենամեծ սրբութիւնն է, ուր կը պահուէին Տասնաբանեայ պատուիրաններու տախտակները, Ահարոնի ծաղկյալ գաւազանն ու մանանայով լեցուն ոսկեայ սափորը: Քրիստոնէական Եկեղեցւոյ համար այն Նոր Ուխտի, այսինքն՝ Քրիստոսի Եկեղեցւոյ նախատիպն է, որուն համար սահմանուած է այս տօնը՝ Եկեղեցւոյ մշտնջենականութեան խորհուրդով:


Տօնը կը նշուի Վարդավառի՝ Քրիստոսի Պայծառակերպութեան տօնին նախորդող Շաբաթ օրը:



Կիրակի, 08 Յուլիս 2018

## **Վարդավառ - Մեր Տէր Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան Տօն**

Այսօր Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ մեծ տաղաւար տօներէն մէկն է: Հինգ տաղաւար տօներէն Պայծառակերպութիւնը կը տօնենք այսօր, մեր Տիրոջ այլակերպութիւնը, պայծառակերպութիւնը Թաբոր լեռան վրայ: Որովհետեւ այս տօնը կը յայտնէ մեզի, թէ մենք որուն կը հետեւինք եւ մեր յոյսը որուն վրայ դրած ենք:



Ո՞վ է Քրիստոսը մեզմէ իւրաքանչիւրին համար :

Քրիստոսը հրաշք մարդ մըն է: Մտւորին մէջ ծնաւ, խաչի վրայ մեռաւ: Բանուոր դասակարգին կը պատկանէր, համալսարան չգնաց, բանակներ չունէր, զինուորներ չունէր, դրամ չունէր, պետութիւն չունէր իր ետեւը կանգնած, բայց աշխարհին ամենէն յաջող մարդը դարձաւ, աշխարհի ամենէն անուանի մարդը դարձաւ, միլիոնաւոր մարդիկ կը հետեւին իրեն: Ինչպէ՞ս այս ճախողանքէն այս յաջողութիւնը դուրս կու գայ. որովհետեւ հրաշք մը կայ իր կեանքին մէջ: Որովհետեւ պարզ մարդ մը չէ ան: Պարզ մարդ մը ըլլայ, իր տարեդարձը մէկ օր կը տօնենք, այնպէս չէ՞, այնպէս ինչպէս բոլոր մեր միւս հերոսներուն: Բայց երբ որ իր տարեդարձը գայ, երկու ամիս կը տօնենք՝ մեծագոյն շուքերով, որովհետեւ այս անձին մէջ ուրիշ բան մը կար, Աստուած կար Անոր մէջ: Մեզի կը նմաներ, ճիշդ եւ ճիշդ նոյն մեզի պէս էր, բայց նաեւ մեզմէ շատ տարբեր բան մը կար Անոր մէջ. Աստուած կար, հետեւաբար արժանի է, որ իր ետեւէն երթանք եւ մեր յոյսը կապենք Անոր, որովհետեւ Աստուած է Աստուծմէ, Լոյս է Լոյսից:

Սիրելիներ՛ր, Տէր Յիսուս Քրիստոս ինչ որ ըսաւ իր խօսքերուն, ետեւը կեցաւ, ինչ որ ըսաւ՝ յաջողեցաւ: Տէր Յիսուս Քրիստոս հրաշքներ միայն չգործեց անցեալին, երբ որ կ'ապրէր. հրաշքներ կը գործէ նաեւ՝ այսօր: Որովհետեւ Աստուած է Ինքը եւ ամէն տեղ է Ինքը: Եւ Ինքը կարող է մեր սիրտերէն ներս մտնել եւ փոխել մեզ: Յիսուս պայծառակերպեցաւ, այլակերպեցաւ. բայց ասիկա ինձի ի՞նչ այսօր: Մեզի համար ի՞նչ բարի լուր ունի այս դէպքը: Ի՞նչ կը տօնենք մենք այսօր: Որովհետեւ մենք կը տօնենք, սիրելիներ, այդ փառաւոր տեսարանը, որ Յիսուսի վրայ կատարուեցաւ, մեր վրայ ալ պիտի կատարուի: Մենք ալ պիտի պայծառակերպինք, մենք ալ պիտի այլակերպինք, մենք ալ Քրիստոսի պէս պիտի ըլլանք: Եւ Քրիստոս պիտի

կատարե այդ բանը. մեր մեջը իր Յոզիս ուղարկելով եւ մեր Էութիւնն ու բնութիւնը փոխելով: Աստուածացնելով նոյն գործը պիտի կատարե: Այն ձայնը, որ Տէր Յիսուսին եկաւ, մեզի եկաւ. «Սա է իմ սիրելի Որդին, Որուն մտիկ ըրեք»: Շատ մարդեր կը ճանչնաս, բայց եթէ Տէր Յիսուսը չես ճանչնար, կեանքիդ ամենէն մեծ կորուստն է: Շատ գիրքեր կարդացեր ես, պիտի կարդաս, բայց եթէ իր խօսքերը չես կարդացած, շա՛տ պիտի զղջաս: Որովհետեւ ինքը ո՛չ միայն պատմութիւնը փոխեց, այլ նաեւ՝ փոխեց մեր կեանքերը: Եթէ անգամ մը կը ճանչնաս անոր, անգամ կը մտնէ քու սիրտեդ. ներս եւ փոխելու կը սկսի քեզի, այլեւս չես կրնար ապրիլ առանց Անոր. երթալիք ուրիշ տեղ մը չունիս այլեւս: Միայն Անոր ծունկերուն առջեւ կրնաս աշակերտիլ եւ հետեւիլ: Եւ այս է, որ մենք կ'ուխտենք այս մեծ տօնին: Որովհետեւ մենք այո՛ կ'ըսենք այն մեծ պայծառակերպութեան, որ Աստուած պիտի փոխէ մեզի: Փոխել կ'ուզէ մեզի, լուսաւոր դարձնել կ'ուզէ, ժպիտ մը դնել կ'ուզէ մեր երեսին: Որքան պէտք ունի Յայաստանի ժողովուրդը: Դուրսէն եկող բոլոր հայերուն ուշադրութիւնը կը գրաւէ. ժպիտ չկայ, ժպիտը շատ քիչ է ե՛ւ մայր հայրենիքին մեջ ե՛ւ սփիւռքին մեջ : Պատճառները շատ կրնան ըլլալ, բայց հաւատացէ՛ք, որ նիւթական չեն հիմնական պատճառները, որովհետեւ մենք այդ այլակերպող, պայծառակերպող, մեր երեսը փոխող, ժպի՛տ, այո՛, հոն ժպի՛տ դնող Քրիստոսը կորսնցուցած ենք: Եւ պէտք է Անիկա վերագտնենք, պէտք է Անոր հետ հաշտուինք, եւ պէտք է Անիկա փոխելու սկսի անհատապէս մեզի եւ ազգովին, միասնաբար, ամենքս:

Ես պիտի շնորհաւորեմ ձեր այս սուրբ տօնը: Քրիստոսի օրհնութիւնը ձեր տուներուն մեջ ըլլայ, մեր վրայ ըլլայ, մեր հայրենիքին վրայ ըլլայ եւ հոնկէ լոյս հայթայթէ մեզի, եւ հաւատքի ջուրով կանանչին վերստին մեր եկեղեցիները, մեր վանքերը, եւ հոնկէ աստուածահաճոյ պտուղներ յառաջանան այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

Օրհնութեամբ`  
Տէր Դաւիթ Քահանայ Սարգսրեան





# Holidays

2018-07-07

## Commemoration of the Tabernacle of Old Testament (or the Old Ark) and the Feast of the New Holy Church

Tabernacle of the Old Testament is the most sacred sanctity of the Old Testament, where the board of the Ten Commandments, Aaron's ornament crosier and the golden urn full of manna were kept. Christian Church is considered to be the prototype of the New Testament - that is - the Church of Christ. So, this feast has been included in the calendar to symbolize the mystery of eternity of the Church.



2018-07-08

## Feast of Transfiguration of Our Lord Jesus Christ

The Feast of the Transfiguration of Our Lord Jesus Christ is one of the five main “Tabernacle” feasts of the Armenian Apostolic Orthodox Holy Church. It commemorates the transformation or the “transfiguration” that came over Jesus while He was praying. Christ's face shone like the sun and his clothes became a radiant and gleaming white. The Apostles Peter, James and John witnessed that event which occurred on a high mountain named Tabor.

Evangelists St. Matthew, St. Mark and St. Luke testify about the transfiguration of Jesus in the Gospels (Matthew 17:1-13; Mark 9:1-12, Luke 9:28-36).

“... As they looked on, a change came over Jesus: his face was shining like the sun and his clothes were dazzling white. Then the three disciples saw Moses and Elijah talking with Jesus. So Peter spoke up and said to Jesus, “Lord, how good it is that we are here! If you wish I will make three tents here, one for you, one for Moses and one for Elijah.” While he was talking, a shining cloud came over them, and a voice from the cloud said, “This is my own dear Son, with whom I am pleased – listen to him!” When the disciples heard the voice, they were so terrified that they threw themselves face downward on the ground. Jesus came to them and touched them. “Get up,” he said. “Don't be afraid!” So they looked up and saw no one there but Jesus. (Matthew 17:2-8)



In the Armenian Church, the Feast of the Transfiguration of Our Lord Jesus Christ is celebrated 98 days following Easter. The Feast also is known by the common name of “Vardakas”. This day is associated with an old Armenian tradition of pouring water on one another. Some sources attribute the tradition as a remnant of an Armenian pre-Christian celebration. The Monday following the Feast is a Memorial Day.



Արդարութեան  
Ճանապարհը  
Ուղեցոյց  
Ճշմարտութեան  
Մատթեոս 5:6



Լեռան մօտ հաւաքուած ամբոխը  
հետաքրքրութեամբ կ'ունկնդրէր  
Մեծ Վարդապետին, Որուն խօսքերը  
կը թափուէին հոգիներու վրայ, եւ կը  
պայծառացնէին անոնց միտքն ու էութիւնը:

Այո՛, երանի անոնց, որոնք կ'ապրին արդարութեան տագնապը, որովհետեւ  
արդարութեան տենչն է, որ մարդուն կ'ազնուացնէ եւ կ'առաջնորդէ  
աստուածահաճոյ կեանքին:

Քաղցն ու ծարաւը մարդկային կեանքի սիւթական վիճակներէն են: Քաղցը  
ուտելու, սնուելու կարիքի զգացումն է՝ ֆիզիքական գոյութեան համար, որ  
պիտի բաւարարուի: Հոգիի գոյութեան, հոգեւոր քաղցի համար անհրաժեշտ  
է հոգեպէս սնուիլ Հոգիին համար, որուն իբրեւ կերակուր կը հանդիսանայ  
նաեւ՝ արդարութիւնը, արդար եւ անմեղ ըլլալը: Քրիստոնէական  
հասկացողութեամբ միակ անմեղն ու արդարը Աստուած էնքն է: «Տիրոջ  
նման սուրբ չկայ, մեր Աստուծոյ նման արդար չկայ...» (Ա Թագ. Բ 2):

Սակայն Հին կտակարանին մեջ բազմիցս կը հանդիպինք մարդոց, որոնք յատկանշուած են իրենց արդարութեամբ, եւ Աստուած արժեւորած է անոնց՝ բազմաթիւ մենաշնորհներ պարգեւելով: «Տէր Աստուած ըսաւ Նոյին. «Դուն եւ քու ողջ ընտանիքդ մտե՛ք տապան, որովհետեւ մարդկային ցեղին մեջ միայն քեզ գտայ արդար ինծի հանդէպ» (Ծննդոց Է 1), կամ. «Արդ, դուն քու խնդրանքներովդ աղաչե՛ Աստուծոյ, որովհետեւ դուն արդար ես. Տէրը անձրեւ կ'ուղարկէ, կը լեցուին ջրհորները, եւ մենք այլեւս չենք նուաղիր ծարաւէն» (Յուդիթ Ը 29):

Աստուած կը թելադրէ, որ մենք հետամուտ ըլլանք արդարութեան եւ ջանանք ապրիլ արդար կեանքով, քանզի. «Արդարը երբէք չպիտի դողայ, ամբարիշտները չպիտի բնակուին երկրի վրայ: Արդարի բերանը իմաստութիւն կը բխեցնէ, բայց անիրաւի լեզուն պիտի կտրուի: Արդար մարդոց շրթունքները շնորհքներ պիտի բխեցնեն, բայց ամբարիշտներու բերանը պիտի կործանի» (Առակներ Ժ 30-32):

Մարդու հոգին կարիք ունի Աստուծով լեցուելու, զօրանալու եւ արդարանալու: Այդ է, որ Քրիստոնեայի կեանքը կը վերածէ ձգտումի եւ ճիգի՝ յանուն արդարութեան: Այս վիճակին Յիսուս երանի կու տայ: Արդարութեան ձգտողը անձնագոհ է, խրատատու եւ աստուածամերձ: Երանելի են անոնք, որոնք միշտ կարիքն ունին արդարութեան:

«Երանի անոնց որոնք քաղցն ու ծարաւը ունին արդարութեան, որովհետեւ անոնք պիտի յագեցնան». դարեր շարունակ լսուած եւ քարոզուած է այս երանին, սակայն հազարաւորներու կողմէ մնացած է անարձագանգ: Արդարութեան բացակայութեան պատճառը եսասիրութիւնն ու ազահողթիւնն է. «Մեղաւորը փոխ կ'առնէ ու չի վճարեր, իսկ արդարը կ'ողորմէ ու կու տայ» (Սաղմ. Լ2 21):

Մարդկային ընկերակցութիւնը մարդահաճոյութեան անընդհատ կը ձգտի, որուն հետեւանքով ալ այդ կը քայքայուի: Հարկ է մոռնալ ես-ը եւ աչքերը ուղղել հաւատքի Չօրագլուխին՝ Յիսուսին: Դարեր շարունակ մեր հայրերը, իրենց ես-ը մոռցած, ջանացին Քրիստոսէն ճառագայթող ճշմարտութիւնով լեցուիլ՝ արդարութեան, ճշմարտութեան եւ աստուածաճանաչողութեան համար: Մեզի կը մնայ միանալ Պօղոս առաքեալի կոչին. «Յիշեցե՛ք ձեր առաջնորդներուն, որոնք ձեզի Աստուծոյ խօսքը ըսին:

Նայելով անոնց կեանքի ընթացքի վախճանին՝ հետեւո՛ղ եղէք անոնց հաւատքին: Յիսուս Քրիստոս նոյնն է երեկ, այսօր եւ յաւիտեան» (Եբր. ԺԳ 7-8),

գործադրել այս խօսքերը, որպեսզի հնարաւոր ըլայ ընթանալ այն ճանապարհով, որ Քրիստոնեային կ'առաջնորդէ դէպի իրական արդարութեան, դէպի երանաւետ կեանք, որ իւրաքանչիւրիս փափաքն ու նպատակն է:



## Օրուան Խորհուրդներ

- Աստուծոյ «Չայր մեր» դիմելով կը բացայատուի եւ՛ Աստուծոյ սերը, եւ՛ մեր պատասխանը Աստուծոյ սիրոյն: Երբ կ'ըսենք Աստուած մեր Չայրն է, հաւատքը կը դառնայ վստահութիւն, սերը՝ գործ, միութիւնը՝ արարելու կամք:
- Ճշմարիտ իմաստութիւնը մարդուն չհպարտացներ, այլ՝ կը խոնարհեցնէ:
- Չայ գիրերու գիւտը մեր ինքնութեան պահպանման բանալին է, որուն շնորհիւ բացուեցաւ Չայ ազգին յաւերժութեան դուռը:
- Մարդիկ չեն ծնիր սուրբ ու անմեղ, այլ կը ծնին բարի եւ պատրաստ՝ սրբութիւնն ու անմեղութիւնը ձեռք բերելու: Մենք բոլորս կոչուած ենք սրբութեան՝ որպէս Աստուծոյ ժողովուրդ, սակայն մեր կամքէն կախեալ է՝ կը ժառանգենք այդ, թէ՛ ոչ:



## Եկեղեցւոյ Տաղաւար Տօներ եւ Յառաջիկայ Ձեռնարկներու

Պայծառակերպութիւն Տեան Մերոյ Յիսուսի Քրիստոսի  
**Վարդապատ** – Ուխտագնացութիւն Դէպի Ռիկօ  
Կիրակի, 15 Յուլիս 2018

Վերափոխումն Ս. Աստուածածնի –

Խաղողօրհնէք – Կիրակի, 12 Օգոստոս 2018

Խաչվերաց – Կիրակի, 16 Սեպտեմբեր 2017

Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 27 եւ 28, 2018

Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 2 Դեկտեմբեր 2018

Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 48-րդ Տարեդարձ –

Կիրակի, 9 Դեկտեմբեր 2018

### FEAST DAYS AND UPCOMING EVENTS

Feast of the Transfiguration of our Lord - Pilgrimage to Rigaud

**Vartavar - Sunday, July 15th**

Feast of the Assumption of the Holy Mother of God -

**Sunday, August 12th, 2018**

Feast of the Exaltation of the Holy Cross –

**Sunday, Sept. 16th, 2018**

Annual Bazaar – Saturday & Sunday -

**October 27 & 28, 2018**

Children's Christmas /CFFA –

**Sunday, December 2nd, 2018**

Church 48<sup>th</sup> Anniversary –

**Sunday, December 9<sup>th</sup>, 2018**



**Ուշադրութիւն**  
**մեր սիրելի**  
**հաւատացեալներուն**



**Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ: Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

*Ճիսական Խորհուրդ*

**Attention to our beloved parishioners,**

**If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.**

**Thank you for your cooperation.**

*Parish Council*



## ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ

### Ս. ՊՍԱԿԱԴՐՈՒԹԵԱՆ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ  
Հովիւն ու Ճիական Խորհուրդը  
**ՀՐԱԿ ՍԱՅԵԱՆԻ**

ԵՒ

### ՍԹԵՖԱՆԻ ՖԱԽՈՒՐԻԻ

Պսակադրութեան ուրախ առիթով  
իրենց խորին շնորհաւորանքը կը յղեն պսակադրեալ զոյգի  
ճնողներուն եւ հարազատներուն, մաղթելով որ  
Աստուածային Օրհնութեան արժանանան  
իրենց կեանքի ամբողջ տեւողութեան:



## CONGRATUALTIONS ON THE WEDDING CEREMONY

*The Pastor & Parish Council  
Of the St-Gregory the Illuminator Armenian Cathedral  
On the Wedding Ceremony*

*Of*

**HERAG SAIYAN**

**&**

**STEPHANIE FAKHOURI**

*Extend their heartfelt congratulations to their parents and family,  
wishing them to receive  
God blessing throughout their life.*





## ՇՆՈՐՀԱԴՈՐԱՆՔ

### Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ  
Հոգեւոր Հովիւն ու Ծխական Խորհուրդը  
**ՄԵԻԱՆԱ ԱՂԱԶԱՐԵԱՆԻ**

Մկրտութեան օրհնաբեր եւ ուրախ առիթով  
Իրենց խորին շնորհաւորանքը կը յղեն մկրտեալի ծնողներուն  
եւ բոլոր հարազատներուն, աղօթելով առ Աստուած,  
որ փոքրիկն **ՄԵԻԱՆԱ ԱՂԱԶԱՐԵԱՆ**

Ս. Մկրտութեան աւագանէն իր վերստին ծնունդով արժանանայ  
Աստուածային Օրհնութեան  
իր կեանքի ամբողջ տեւողութեան:



## CONGRATUALTIONS ON THE BAPTISMAL CEREMONY

*The Pastor & Parish Council  
of St-Gregory the Illuminator Armenian Cathedral  
On the Baptismal ceremony  
of the child  
**SEVANA AGHAZARIAN***

Extend their heartfelt congratulations  
to the child parents & family.





# ՆՈՒԻՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

***Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal  
Donations of June/July 2018  
have been received with great appreciation***



## **HOKEHANKISD:**

### **THE LATE SONA DEMIRJIAN**

**Ladies Auxiliary: Dr. Arto Demirjian \$250**

**Dr. Arto Demirjian \$250, Mr. & Mrs. Berj & Chake Bedrossian \$150,  
Dr. Megerditch & Dr. Salpi Tarakdjian, Mrs. Grace Bedrossian \$100, Mrs.  
Makrouhie Zourikian - Oltaci, Mr. & Mrs. Krikor & Armine Kanar,  
Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian, Mr. Vahé Keresteciyan,  
Dr. & Mrs. Archavir & Nadia Gundjian,  
Mrs. Vartouhie Balian, Mr. Arto Manoukian \$50, Mrs. Hilda Kepekci \$40,  
Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian \$25, Mr. & Mrs. Toros & Aida Keskinbicak \$20**

### **THE LATE BERDJ MOURADIAN**

**Mr. & Mrs. Arto Moradian \$100, Mr. Stephan Mouradian \$40**

### **THE LATE BERJOUHI & HOVSEP EGIAN**

**Ms Nazeli Egian \$100**

### **THE LATE ARTO KEPEKCI**

**Dr. Arto Demirjian \$50**





# ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ

Երկուշաբթի, 9 Յուլիս 2018

Յոգեհանգիստ

առաւօտեան ժամը 10:30-ին

Գերեզմանի այց – փափաքող  
հաւատացեալներէն կը խնդրուի  
հեռաձայնել

Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066



## REMEMBRANCE OF THE DEAD (MERELOTZ)



**Monday, July 9, 2018**

**Memorial service at 10:30 am**

For cemetery visit please  
contact to the Church office at  
**(514) 279-3066**





## ՑԱԻԱԿՑԱԳԻՐ

**Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ  
Եկեղեցւոյ**

**Հովին ու Ճիսական Խորհուրդը**

**Ողբացեալ**

**ԺԱՆ ՏՐԴԱՏԵԱՆԻ  
(JEAN DERTADIAN)**

**Մահուան տխուր առիթով**

**իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն**

**հանգուցեալի բոլոր պարագաներուն,**

**աղօթելով առ Աստուած,**

**որ անոր հոգին Երկնային Արքայութեան արժանանայ:**





# Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդարանիստ Եկեղեցւոյ

## 2018 Տարեշրջանի Տօնացոյց

Ամիս	Օր	Ձեռնարկ
Յուլիս	15, Կիրակի	«Պայծառակերպութիւն» Խաչալուայ Ջրօրհնէք Վարդավառ
	9, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Յոգեհանգստեան Պաշտօն
Օգոստոս	12, Կիրակի	Տօն «Վերափոխումն Ս. Աստուածածնի» Խաղողօրհնէք Աւարտին Ճաշկերոյթ Եկեղեցւոյ շրջափակին մէջ
	13, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Յոգեհանգստեան Պաշտօն
Սեպտեմբեր	16, Կիրակի	Ս. Խաչվերաց Մատաղ Վաչէ Յովսէփեան սրահ
	17, Երկուշաբթի	Յիշատակ Մեռելոց Յոգեհանգստեան Պաշտօն
	21, Ուրբաթ	Հայաստանի Հանրապետութեան 25-րդ Տարեդարձ
Հոկտեմբեր	27, 28 Շաբաթ, Կիրակի	Տարեկան Պագար «Մարի Մանուկեան» սրահ

<b>Նոյեմբեր</b>	<b>10, Շաբաթ</b>	<b>«Առնիտաս» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ</b>
<b>Դեկտեմբեր</b>	<b>2, Կիրակի</b>	<b>Մանուկներու Ս. Ծնունդ եւ Կաղանդի Տօնակատարութիւն «Մարի Մանուկեան» սրահ</b>
	<b>9, Կիրակի</b>	<b>Եկեղեցւոյ Գմման եւ Օծման 48-րդ Տարեդարձ Տօնական Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահ</b>
	<b>31, Երկուշաբթի</b>	<b>ՆՈՐ ՏԱՐԻ</b>



# SOL



## ՎԱՐԴԱՎԱՌ / VARTAVAR

ՊԱՅՇԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ  
ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ԸՐԻՍՏՈՍԻ

FEAST OF TRANSFIGURATION OF OUR LORD JESUS CHRIST

### ՈՒՆՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ

## DIVINE LITURGY

Կիրակի, 8 Յուլիս 2018, ժամը 10:30-ին

Sunday, July 8, 2018 at 10:30 am

Պատարագիչ՝

**ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԲՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ**

Նորանշանակ Հոգեւոր Հովիւ

Celebrant

**REV. FR. DAVID MARGARYAN**

*Newly Appointed Pastor*

Ս. Սեղանին պիտի սպասարկեն Բրշ. Սարկաւազները:  
Պատարագի երգեցողութիւնը պիտի կատարէ  
«Կոմիտաս» Դպրաց Դասը:

**Ղեկավար՝ Սարգիս Պարսեմեան/Choirmaster: Sarkis Barsemian**

**Երգեհոնահար՝ Կարէն Մանուչարեան/ Organist: Karen Manucharyan**

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ մեր ժողովուրդը  
ներկայ գտնուելու եւ հաղորդակից դառնալու Եկեղեցւոյ  
Նորանշանակ Հովիւ՝ Տ. Դաւիթ Բիւնյ. Մարգարեանի  
մատուցած հոգեպարար Ս. Պատարագին եւ քարոզին:

All our faithful parishioners are invited to be present and participate in the Divine Liturgy and the sermon.



## **Գրաւուած Օր**

**«Կոմիտաս» Դպրաց Դաս Երգչախումբի  
Յիմնադրութեան 60 Ամեակի**

**Յանդիսութիւն**

**10 Նոյեմբեր 2018, Շաբաթ երեկոյեան**

**Կը խնդրուի չխաչաձեւել:**

**Մանրամասնութիւնները յաջորդիւ:**

**Շնորհակալութիւն  
Ծխական Խորհուրդ**



## Յայտարարուժիլ

Միքելի հաւատացեալներ կը փափաքինք տեղեկացնել ձեզ թէ յետայսու Ծխական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին Երեքշաբթի օրը, երեկոյեան ժամը 5-5:30, կէս ժամ տեւողութեամբ, Ծխական Խորհուրդը մեր հաւատացեալներուն պիտի յատկացնէ առիթը խորհրդակցական հանդիպում մը ունենալու Ծխական Խորհուրդին հետ:

Այն հաւատացեալները որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:

Ժամադրութեան համար հեռաձայնել

Եկեղեցւոյ քարտուղարութեան՝

(514) 279-3066

Շնորհակալութեամբ՝  
Ծխական Խորհուրդ  
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ





# Lancement du Groupe Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont



**Nous vous invitons à vous joindre à notre nouvelle Chorale d'Enfants « Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont » (âge d'inscription 7 à 15 ans).**



**Les pratiques débuteront dimanche le 14 janvier 2018, à l'Église St-Grégoire l'Illuminateur, situé au 615 Av. Stuart à Outremont et auront lieu de 13h00 à 14h00. Elles se poursuivront par la suite tous les dimanches selon ce même horaire.**

**Les cours seront donnés par le professeur Karen Manucharyan diplômé du Conservatoire de Yerevan, en Arménie, qui assumera la direction de cette chorale.**

**Les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège**

**Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.**

**La participation est gratuite. Venez nombreux participer à cette expérience enrichissante!**

**Pour des informations additionnelles,  
svp vous adresser au  
(514) 279-3066 ou à [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)**

**Conseil paroissial**



# Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մանկական

## Երաժշտական Խումբ



Ձեզ կը հրաւիրենք միանալու մեր նոր մանկական երգչախումբին «Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont» - (գրանցման տարիք 7-15 տարեկան):

Փորձերը կը սկսին Կիրակի, 14 Յունուար 2018, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, կ.ե. ժամը 1:00 2:00 - հասցէ 615 Stuart Avenue Outremont-ի մէջ:

Փորձերը պիտի շարունակուին կատարուիլ ամէն Կիրակի, վերոյիշեալ նոյն ժամուին:

Դասընթացքները պիտի կատարէ Երեւանի երաժշտանոցէն շրջանաւարտ, Կարէն Մանուչարեան, որ կը ստանձնէ նաեւ՝ երգչախումբին ղեկավարութիւնը:

Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նորթները, եւ միաժամանակ մշակելով անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:

Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Ղայերէն լեզուներով:

Մասնակցութիւնը անվճար է: Եկէ՛ք եւ օգտուեցէք այս պատեհ առիթէն:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հաճեցէք հեռաձայնել (514)279-3066 կամ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)



Ծիական Խորհուրդ



# Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



**ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ**

**ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ**

**ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ  
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ**

**Արդեն իսկ տեղի կ'ունենան ամեն**

**Յինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին**

**Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ  
Եկեղեցւոյ մէջ:**

**Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս  
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն ընթացքին  
միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ Գիրքը, Եկեղեցւոյ  
հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն ու մասնակցութիւնը  
եկեղեցւոյ կեանքին մէջ եւ վերջապէս պատասխան գտնել մեզ  
յուզող հարցումներուն ու մտահոգութիւններուն:**

**Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:**

**Աղօթարար՝**

**Տ. Յայարի Զինյ. Թանաշեան**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/

[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ  
Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal  
ԵԼ / And  
Լաւալի Ս. Խաչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի  
Holy Cross Armenian Church of Laval



## **ՎԱՐԴԱՎԱՌ / VARTAVAR**

**Քրիստոսի Այլակերպութեան Տօնին Առիթով  
Transfiguration of our Lord Jesus Christ**



**Ուխտագնացութիւն Դեպի Ռիկօ  
Pilgrimage to Rigaud**

43 Rue de Lourdes, Rigaud, QC

**Կիրակի, 15 Յուլիս / Sunday, July 15, 2018**

**Ս. Պատարագ / Holy Mass**

**Կէսօրին ժամը / at - 12:30 noon**

**Պատարագիչ` / Celebrant**

**ԳԵՐՇ. Տ. ԱՐԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ**

**Առաջնորդ Գանատահայոց Թեմի**

**HIS GRACE BISHOP ABGAR HOVAKIMYAN / Primate**



### **Օթօպիւսի մեկնումի վայրեր.-**

- Մոնթրեալ – Next to Depaneur Couche Tard in front of Normandie Shopping Center (Rue Salaberry)
- Լաւալ – Ս. Խաչ Հայց. Առաք. Եկեղեցի (St. Martin O.) առաւօտեան ժամը 10:30-ին

**Սակ - \$25 (Օթօպիւս եւ ճաշ)**

- Անձնական Միջոց – \$15 (ճաշ)

**Սակ Փոքրերու - \$15 (Օթօպիւս եւ ճաշ)**

- Անձնական Միջոց Փոքրերու Սակ - \$10 (ճաշ)

### **Bus Transportation:**

- Montreal – Next to Depaneur Couche Tard in front of Normandie Shopping Center (Rue Salaberry)
- Laval – Holy Cross Armenian Church (St. Martin O.) at 10:30 am

**Fee – Adult - \$25 (Bus & Lunch)**

- Personal Transportation Adult - \$15 (Lunch)

**Fee - Child - \$15 (Bus & Lunch)**

- Personal Transportation Child - \$10 (Lunch)

- Տեղերու արձանագրութիւնը անհրաժեշտ է բոլորին Օթօպիւս եւ անձնական միջոց, կը խնդրենք հեռաձայնել եկեղեցիներու Զարտուղարութեան մինչեւ 9 Յուլիս 2018

- Reservation & registration required for Bus and Personal Transportation Users, please call the Church office until July 9<sup>th</sup>, 2018 at:

Մոնթրեալ / Montreal – (514) 279-3066 Լաւալ / Laval – (450) 687-5355





## Canada Summer Students Jobs 2018

### 3 Positions Being Offered-

#### Job Titles and Descriptions:

- 1. Administrative/office assistant:** digital filing, archiving project, data base management
- 2. IT/Website development assistant:** maintain church website, introduce new material fields possibilities (videos, news letters, graphics, event communication)
- 3. IT/Social media development assistant:** maintain church social media project (Facebook, Twitter, Instagram), enhance electronic communication with parishioners/community

**Work Location:** The Armenian Holy Apostolic Church (St-Gregory)  
615 Stuart Avenue, Outremont, QC, H2V 3H2

**Duration of employment:** 6 weeks Full-time  
From July 1<sup>st</sup> to August 31<sup>st</sup> 2018 (flexible)

**Academic Level:** Post-Secondary

**Language Requirement:** English and French

**Contact** person: Maral at 514-279-3066 or at [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)